



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
„ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՁ,,
պետական ոչ առևտրային կազմակերպություն

2022-2027 թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Նպատակը՝

*քոլեջի տնօրենի թափուր տեղի միջույթին
մասնակցության համար*

Հեղինակ՝

*Տնօրենի թափուր տեղի պաշտոնի
հավակնորդ Յուրա Խաչատուրի Սուքիասյան*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	2
ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆԸ.....	2
ՔՈԼԵՋԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....	4
ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ, ՆՊԱՍՏԱՎՈՐ ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԸ /SWOT/.....	8
ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ.....	10
ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.....	13
ՔՈԼԵՋԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	15
ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....	16
ՔՈԼԵՋԻ 2022-2027 Թ.Թ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ	

ՆԱԽԱԲԱՆ

«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության /ՊՈԱԿ/ զարգացման 2022-2027 թվականների ծրագիրը ներկայացնում և տվյալ քոլեջի տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցում եմ «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին օրենքի» 18.1-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների առկայության հիմքով և նույն հոդվածի 16-րդ կետի 3-րդ կետի համաձայն:

Ներկայացվող զարգացման ծրագիրը հեռանկարային է և նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգու, դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը: Եթե քոլեջի աշխատանքային պլանը հիմնականում ուշադրություն է դարձնում ուսումնական հաստատության ընթացիկ խնդիրների լուծմանը, ապա զարգացման ծրագիրը ներկայացվում է որպես քոլեջի ռազմավարական պլանը, որն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան, ոչ միայն ամենօրյա, այլև երկարատև լուծում պահանջող խնդիրների կարգավորմանը:

Զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար վերլուծվել է քոլեջի առկա վիճակը, ուժեղ և թույլ կողմերը, շեշտադրվել արտաքին հնարավորությունները, առանձնացվել խոչընդոտներն ու հիմնախնդիրները, սահմանվել գործողությունների պլանն ու վերջնարդյունքներ:

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ընդգրկված է հանրապետության միջին մասնագիտական տասներկու քոլեջների խմբում որպես Գեղարքունիքի տարածաշրջանի բազմագործառնային միջին մասնագիտական ուսումնական կենտրոնի: Դրա արդյունքում քոլեջի ուսումնական շենքը նորոգվել է, համալրվել է նոր, ժամանակակից գույքով և սարքավորումներով: Քոլեջի ռազմավարական նպատակն է իրականացնել ուսումնառության ավանդական

մեթոդներին զուգընթաց նոր ուսումնասության խնդիրներին ու մեթոդներին համահունչ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հաճախորդների և շահառուների համար գրավիչ կրթական ծրագրեր:

Քոլեջի առկա և հեռագնա խնդիրները դիտարկվում են երկրի տնտեսության զարգացմանը համահունչ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթությամբ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կադրերի պատրաստում՝ ազգային և պետական անվտանգության հիմնական թիրախների հաղթահարման համատեքստում.

1. Կայուն տնտեսության ապահովում:
2. Տարածաշրջանային և միջազգային համագործակցություն:
3. Անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում:
4. Աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում:
5. Աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացում:

Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթությունը կարևոր դերակատարում ունի երկրի տնտեսության զարգացման, կայուն տեմպի հետագա ապահովման և ժողովրդավարական հասարակության ձևավորման գործում:

Կրթության համակարգի օրակարգի բարեփոխումները առաջնահերթ նշանակություն ունեն կայուն աշխատանքային շուկայի ստեղծման և աղքատության վերացման գործում:

Քոլեջի հիմնական առաքելությունն է. գիտելիքի ստեղծում, փոխանցում և տարածում, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորում, ինչպես նաև սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստում, որակյալ մասնագետների պատրաստում տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճի ապահովում և տարածաշրջանային ու միջազգային համագործակցության ներուժի զարգացում:

Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ Քոլեջն ապահովում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիությունը, ուսումնական գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև մատչելիությունն ու հավասարությունը:

Կարևորելով և գիտակցելով նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումների դերն ու նշանակությունը, Քոլեջն առաքելություն ունի նաև հասարակության մեջ ձևավորել գիտելիքի, մասնագետի և կրթության մասին այն արժեքների և ընկալումների համակարգը, որն անհրաժեշտորեն պետք է ուղղված լինի մեր քաղաքացու, հասարակության և պետության զարգացմանը և հզորացմանը:

ՔՈԼԵՋԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական ակնարկ

«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1972թ. որպես «Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումի Մարտունու մասնաճյուղ», 1977թ. կազմավորվել է որպես ինքնուրույն՝ «Մարտունու ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում»: 2001թ. վերանվանվել է «Մարտունու պետական քոլեջ»-ի: 2002թ. քոլեջին միացել է «Երևանի պետական հումանիտար քոլեջի Մարտունու մասնաճյուղ»-ը: 2011թ. վերանվանվել է «Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ»-ի և նույն թվականին քոլեջին միացել է «Մարտունու արհեստագործական ուսումնարան»-ը: Այսօր քոլեջն ընդգրկված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության տասներկու քոլեջների շարքը և իրականացնում է բազմաճյուղային միջին և նախնական /արհեստագործական/ մասնագիտական ծրագրեր, որտեղ ուսանում են թվով մոտ 390 ուսանողներ:

«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ուսումնական պարապմունքները անցկացնում է 2 մասնաշենքերում, ունի նաև մարզադահլիճ և 0.8 հա բարեկարգ տարածք: Կրթօջախն իր բազմամյա գործունեության ընթացքում պատրաստել է 30 մասնագիտությունների գծով ավելի քան 8000 մասնագետներ,

որոնք աշխատում են տարածաշրջանի, հանրապետության և ԱՊՀ-ի տնտեսությունների տարբեր ոլորտներում: Ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում, քոլեջն արձագանքելով աշխատաշուկայի պահանջներին, դարձել է բազմագործառնության բնույթի կրթօջախ: Քոլեջը ներկայումս մասնագիտացել է հաշվողական տեխնիկայի, հաշվապահական հաշվառման, բանկային գործի, նախադպրոցական կրթության, գործավարության, ավտոփոխադրումների, կոսմետոլոգիայի, գրադարանավարի, սոցիալական աշխատանքի, կառավարման /մենեջմենթի/ և նախնական /արհեստագործական/ մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստման գործում: Քոլեջն ընդգրկված է ԵՄ հարևանության քաղաքականության ծրագրի շրջանակներում ՀՀ ՄԿՈԻ համակարգին ուղղված բյուջետային աջակցության ծրագրում, որը հիմնականում նախատեսված է քոլեջի նյութական և ուսումնամեթոդական հագեցվածության ապահովմանը: Ծրագրի նպատակն է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի որակի համապատասխանությունը աշխատանքի շուկայի պահանջներին:

Սույն զարգացման ծրագիրը մշակվել է քոլեջում միջին և նախնական /արհեստագործական/ մասնագիտական կրթությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու, աշխատաշուկայում շրջանավարտներին առավել ակտիվ ընդգրկելու ակնկալիքով: Զարգացման ծրագրի հիմնադրույթները հնարավորինս համապատասխանեցվել են «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն» և «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» հիմնադրույթներին:

Զարգացման ծրագրի հիմքում դրվել է «ՀՀ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը»:

Առկա վիճակը

Ներկա դրությամբ քոլեջն իրականացնում է նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական և կարճաժամկետ ծրագրեր: Քոլեջի շահառուների կապը համալրված է ոչ միայն տարածաշրջանային, այլև հանրապետության տարբեր բնակավայրերից:

Նախնական /արհեստագործական/ մասնագիտական կրթության գծով ներկայումս քոլեջը կադրեր է պատրաստում հետևյալ մասնագիտություններով.

1041.02.4 Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում /ըստ տեսակների/ /հիմնական ընդհանուր հիմքով/

0732.04.4 Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում /հիմնական ընդհանուր հիմքով/

0723.03.4 Կարի արտադրության տեխնոլոգիա /միջնակարգ լրիվ հիմքով/

1041.03.4 Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում /հիմնական ընդհանուր հիմքով/

Ստորև նշված մասնագիտությունների գծով ներկայումս շահառուներ չունի.

0715.03.4 Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա /հիմնական ընդհանուր հիմքով/

0732.05.4 Տանիքագործական աշխատանքների իրականացում /հիմնական ընդհանուր հիմքով/

0811.01.4 Գյուղացիական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում / հիմնական ընդհանուր հիմքով/

0214.04.4 Գորգագործություն և ժանյակագործություն /միջնակարգ լրիվ հիմքով/

0732.06.4 Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ /միջնակարգ լրիվ հիմքով/

0611.01.4-Համակարգիչների շահագործում

Միջին մասնագիտական կրթության գծով ներկայումս քուէջը կադրեր է պատրաստում հետևյալ մասնագիտություններով.

Առկա ուսուցման՝

0613.01.5 Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում /հիմնական ընդհանուր և միջնակարգ լրիվ հիմքով/

0411.01.5 Հաշվապահական հաշվառում /հիմնական ընդհանուր և միջնակարգ լրիվ հիմքով/

0413.01.5 Կառավարում /մենեջմենթ/ / հիմնական ընդհանուր հիմքով/

0923.02.5 Սոցիալական աշխատանք / հիմնական ընդհանուր հիմքով/

0112.01.5 Նախադպրոցական կրթություն /հիմնական ընդհանուր և միջնակարգ լրիվ հիմքով/

Ստորև նշված մասնագիտությունների գծով ներկայումս շահառուներ չունի.

1012.02.5 Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ /հիմնական ընդհանուր և միջնակարգ լրիվ հիմքով/

0415.01.5 Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ /հիմնական ընդհանուր և միջնակարգ լրիվ հիմքով/

0322.02.5 Գրադարանային գործ / հիմնական ընդհանուր հիմքով/

0412.02.5 Բանկային գործ /միջնակարգ լրիվ հիմքով/

0412.03.5 Ապահովագրական գործ /միջնակարգ լրիվ հիմքով/

0811.03.5 Ջերմատնային տնտեսություն /միջնակարգ լրիվ հիմքով/

0412.01.5 Իրավագիտություն /միջնակարգ լրիվ հիմքով/

Հեռակա ուսուցման՝

0411.01.5 Հաշվապահական հաշվառում

0112.01.5 Նախադպրոցական կրթություն

Ստորև նշված մասնագիտությունների գծով ներկայումս շահառուներ չունի.

0738.05.5 Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում

1041.01.5 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ըստ տրանսպորտի տեսակների/

Կարճաժամկետ ուսուցման՝

1012.01.5 Վրսավիրական արվեստ

1012.02.5 Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ

1041.03.4 Տրակտորիստ մեքենավար

Ուսանողների համակազմը համալրվում է տարածաշրջանի և այլ մարզերի բնակչության թվից՝ անվճար և վճարովի հիմունքով, հիմնական ընդհանուր և միջնակարգ լրիվ կրթության հիմքով: Առկա ուսուցմամբ նախնական /արհեստագործական/ մասնագիտությամբ սովորում է 138 ուսանող, միջին մասնագիտական՝ 240, հեռակա՝ 12:

Անվճար և վճարովի տեղերի թիվը յուրաքանչյուր տարի հաստատում է ՀՀ կառավարությունը: Ընդունելությունը, ըստ կրթական ծրագրերի, սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Ընդունելությունը կատարվում է թափանցիկորեն, առանց քննությունների՝ նախարարության սահմանված կանոնակարգի համաձայն:

ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ, ՆՊԱՍՏԱՎՈՐ ԱՐՏԱՔԻՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԸ /SWOT/

Քոլեջի ուժեղ կողմերը.

1. Քոլեջը գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում և ունի բարձր վարկանիշ Գեղարքունիքի տարածաշրջանում:
2. Քոլեջի մասնաշենքերից մեկը հիմնովին է վերանորոգված, մյուսը՝ մասնակի, երկու մասնաշենքերն էլ ապահովված են ժամանակակից հզոր նյութատեխնիկական բազայով:
3. Քոլեջը հիմնականում մասնագիտացել է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող համակարգչային տեխնիկայի ծրագրավորման, հաշվապահական, նախադպրոցական կրթության, սոցիալական աշխատանքի, կառավարման միջին մասնագիտությունների, տրանսպորտային միջոցների, հարդարման, կարի, գյուղատնտեսական աշխատանքների նախնական /արհեստագործական/ մասնագիտությունների պատրաստման գործում:
4. Քոլեջի դասախոսական և վարպետական անձնակազմը մասնակցել է որակավորման և վերավորակավորման դասընթացներին, որոնք կազմակերպվել են ինչպես ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից, այնպես էլ քոլեջի տնօրինության աջակցությամբ:
5. Քոլեջը սերտ համագործակցում է մասնագիտությունների հետ առնչվող սոցիալական գործընկերների, գործատուների և այլ քոլեջների հետ: Քոլեջն ունի հաստատված համաձայնագրեր մարզի նշված քոլեջների՝ «Վարդենիսի պետական քոլեջի», «Սևանի պետական քոլեջի», «Մարտունու պետական բժշկական քոլեջի» հետ, ըստ որի քոլեջների միջև հաստատվում է գործընկերային հարաբերություններ՝
 - կարիերայի կենտրոնների ստեղծման և մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման փորձի փոխանակման,
 - Հաստատությունների վարչական անձնակազմի և դասավանդողների փորձի փոխանակման և վերապատրաստման,
 - Առկա նյութատեխնիկական բազայի համատեղ օգտագործման, որոնք էլ կնպաստեն քոլեջների միջև կրթական, մշակութային հարաբերությունների զարգացմանը:

Համաձայնագրերում ամրագրված նպատակների իրականացման համար միջնաժամկետ շրջանում անհրաժեշտ են ֆինանսական ներդրումներ:
6.Քոլեջում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Քոլեջի թույլ կողմերը.

- 1.Քոլեջի երկրորդ մասնաշենքն ունի մասնակի վերանորոգման կարիք:
- 2.Քոլեջի շենքային տարածքը չի բավարարում ժամանակակից լրացուցիչ կրթական ծրագրերի ուսումնառության պահանջներին:
- 3.Բավարար չէ նոր ուսումնական գրականությունը:
- 4.Քիչ է տղամարդ դասախոսների քանակը:
- 5.Ցածր է աշխատակազմի աշխատավարձը:
- 6.Ֆինանսական միջոցները բավարար չեն:
- 7.Չունի հանրակացարան:

Քոլեջի համար նպաստավոր արտաքին հնարավորությունները.

- 1.Շարունակական կրթության և ուսուցման հնարավորության տրամադրում երիտասարդներին և մեծահասակների:
- 2.Մասնագիտությունների վերլուծության իրականացում և մասնագիտական կարողությունների բացահայտում:
- 3.Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր մասնագիտությունների ձևավորում:
- 4.Համայնքի անդամներին համակարգչային և այլ ծառայությունների մատուցում:
- 5.Համակարգչային ծրագրերի ուսուցում:
- 6.Մանկավարժների մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում:
- 7.Մասնագիտական կարճաժամկետ դասընթացների իրականացում:
- 8.Այլ ուսումնական հաստատությունների համար մեթոդական ծառայությունների մատուցում:

Քոլեջի համար արտաքին վտանգները.

1. Գեղարքունիքի մարզի ոչ կայուն սոցիալ-տնտեսական վիճակը, բնակչության եկամուտների ցածր մակարդակ:
2. Շրջանավարտների թվի և աշխատաշուկայի պահանջարկի շարունակական անհամապատասխանություն:
3. Վճարովի համակարգում սովորող ուսանողների թվի անկում:
4. Երիտասարդ բանիմաց կադրերի արտահոսքը մարզից դեպի Երևան:
5. Արտգաղթի վտանգ:

ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հիմնախնդիր 1.

Հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր:

Լուծման ուղիները.

Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար: Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Քոլեջի ուսումնական գործընթացներում: Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել Քոլեջի ուսումնական լաբորատոր

բազան: Ժամանակակից չափանիշներին համապատասխան վերափոխել և զարգացնել Քոլեջի տեղեկատվական բազան, ապահովելով տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը: Շարունակել զարգացնել Քոլեջի արտաքին կապերի համակողմանի հզորացումը, էլ ավելի մեծացնել գործակցային կապերը աշխատաշուկայի՝ հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:

Նոր մասնագիտությունների ներդրման և դրանք գրավիչ դարձնելու նպատակով անհրաժեշտ է կատարելագործել և հզորացնել որակի ներքին ապահովման համակարգը՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հիմնախնդիր 2.

Կառավարման համակարգի արդյունավետ գործարկման պայմաններում դառնալ ուսանողական կենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքին և մասնագիտական կարիերային:

Լուծման ուղիները.

Շարունակել բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր, ինչպես նաև բարձրացնել Քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը: Տրամադրել բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների կրթական, մասնագիտական, մշակութային և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը՝ առավելագույնի հասցնելով ուսումնառությունը հաջողությամբ ավարտելու նրանց հնարավորությունները: Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ավելի առարկայական դարձնել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարմանը, նպաստել հաստատությունում գործող ուսանողական խորհրդի հզորացմանը:

Հիմնախնդիր 3.

Նոր մասնագիտությունների՝ „0212.02.5- Հագուստի մոդելավորում և նախագծում,, , „0413.03.5- Ջրոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ,, , „0811.01.5- Գյուղատնտեսություն,, , ներդրման և դրանք գրավիչ դարձնելու նպատակով անհրաժեշտ է կատարելագործել և հզորացնել որակի ներքին ապահովման համակարգը՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Լուծման ուղիները.

Էլ ավելի զարգացնել արդեն ներդրված և շրջանառվող մեթոդները՝ ուսանողների կողմից դասախոսներին գնահատելը, որակի ապահովման ընթացակարգում նշված մեխանիզմները ուշադրության կենտրոնում պահելը, դասախոսական անձնակազմի որակավորումները, աշխատանքային պլանները, ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացվող հաշվետվությունները, կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող մշտադիտարկումները և այլն:

Հիմնախնդիր 4.

Բարեկարգ շենքային պայմաններ և ուսումնաօժանդակ բազա:

Լուծման ուղիները.

Քոլեջն ունի երկու մասնաշենք, որոնցից մեկը ունի վերանորոգման կարիք: Հիմնավերանորոգման կարիք ունի նաև նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության արհեստանոցի մասնաշենքը: Համակարգչային լսարանները ապահովված են ինտերնետ կապով և հազեցած են համակարգիչներով, բայց կարիք ունեն նոր համակարգիչներով համալրման՝ պայմանավորված տեխնոլոգիաների արագ զարգացմամբ և ծրագրային փոփոխություններով: Քոլեջն ունի հարուստ նյութատեխնիկական բազա: Շենքային այմանների բարելավման դեպքում նախնական մասնագիտական /արհեստագործական/ լաբորատորիաներն ու կաբինետները ամբողջությամբ

կծառայեն նպատակին և արտադրական ուսուցման ժամերն ու գործնական պարապմունքները անշուշտ կիրականացվեն արդյունավետ:

Հիմնախնդիր 5.

Կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրամաբ ստեղծված ցանցային համակարգի ձևավորման շնորհիվ, դառնալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի զարգացման և տարածաշրջանային բազմագործառույթային կենտրոն:

Լուծման ուղիները.

Անհրաժեշտ է ուրվագծել նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ոլորտի մասին նոր պատկերացումներ, ճշտել այն խնդիրների ցանկը, որոնք պետք է պատրաստ լինի լուծել նոր տիպի քոլեջը՝ ժամանակակից աշխարհին համապատասխանող գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելու համար: Ստեղծել տեխնոլոգիայես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու, ինչպես նաև սոցիալական գործընկերների և պետական կառավարման այլ մարմինների միջև արդյունավետ համագործակցության համար:

ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջն իր գործունեության շրջանակներում ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ ուսանողների համար ստեղծում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ.

-ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը,

-աջակցում է ուսանողական խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև ուսանողների մասնակցությանը քոլեջի կառավարման և քոլեջի կողմից իրականացվող ծրագրերում,

-միջոցներ է ձեռնարկում քոլեջի ուսանողների ինքնագարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և սննդի կազմակերպման համար,

-իրականացնում է ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության զարգացման նապաստավոր ծրագրեր:

Քոլեջն իր կանոնադրության համաձայն կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

ա/ միջին մասնագիտական, նախնական /արհեստագործական/ մասնագիտական կրթության, հանրակրթության, լրացուցիչ կրթության կազմակերպում.

բ/ արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.

գ/ նախապատրաստական դասընթացների կազմակերպում.

դ/ մասնագիտական ուսուցման դասընթացի կազմակերպում.

ե/ կադրերի վերապատրաստում, վերավորակավորում և որակավորման բարձրացում.

զ/ գիտահետազոտական աշխատանքների իրականացում.

է/ ուսանողների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ուսումնարտադրական գործունեության և սպասարկման ծառայությունների իրականացում.

ը/ հրատարակչական գործունեության իրականացում.

թ/ սովորողների հանրային սննդի կազմակերպում.

ժ/ սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում.

ժա/ ուսանողների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված մշակութային գործունեության իրականացում:

Քուլեջն իր գործունեության հետ կապված ունի նաև սահմանափակումներ:

1. Քուլեջը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:
2. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրանկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
3. Խոշոր գործարքը կարող է կատարվել լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

**ՔՈՒԼԵՋԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ,
ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել քուլեջի ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ համակարգմանը: Ինչպես գիտենք, քուլեջի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հիմնական ծրագրի՝ կախված պետական պատվերի համակարգում սովորողների թվից, նաև արտաբյուջետային միջոցներից, որը ձևավորվում է վճարովի համակարգում սովորողների վարձավճարներից:

Սույն զարգացման ծրագրում նշված հիմնախնդիրների լուծումը նախատեսում է իրականացնել ինչպես բյուջեի արդյունավետ տնօրինման սահմաններում, այնպես էլ ֆինանսական հոսքերի ավելացման հաշվին՝ բազմապատկելով դրանց աղբյուրները, մասնավորապես.

-կազմակերպել և անցկացնել մասնագիտական ուսուցման կարճաժամկետ վճարովի դասընթացներ՝ ապահովելով անհրաժեշտ նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազա,

- օրենքով սահմանված կարգով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,
- համագործակցելով գործատուների, պետական այլ կառույցների, ինչպես նաև քոլեջի հաջողակ շրջանավարտների, համայնքապետարանի և այլ բարեգործների հետ, խրախուսել նրանց կողմից քոլեջի ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները,
- մասնակցել „Միասնական սոցիալական ծառայության», կողմից հայտարարվող ծրագրերի շուրջ բանակցություններին,
- մասնակցել „Պետական գնումների գործակալություն», ՊՈԱԿ-ի կողմից տարբեր կրթական ծրագրերով հայտարարվող մրցույթներին:

Կարևորում են յուրաքանչյուր տարի ամփոփել նախորդ տարվա ընթացքում կատարած ֆինանսական ծախսերը՝ ներկայացնելով հաշվետվություն՝ ապահովելով թափանցիկությունն ու իրազեկվածությունը:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Քոլեջն իր առջև դրած հիմնախնդիրների և դրանց լուծումների արդյունավետ իրականացման համար իրականացնում է մոնիթորինգ թե ուսանողների շրջանում /կատարելով հարցումներ դասախոսական անձնակազմի որակների վերաբերյալ/, թե ստորաբաժանումների ղեկավարների շրջանում /ուսումնասիրելով դասախոսական անձնակազմի աշխատանքային գործունեության մասին հաշվետվություններ, աշխատանքային պլանները/: Ուսանողների շրջանում մշտադիտարկման նպատակով հաճախակի իրականացվում են աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումներ. կարիքների վերհանում, ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության իրական աստիճանն ու կարողությունների թափանցիկ գնահատում: Մոնիթորինգի արդյունքում, յուրաքանչյուր տարվա վերջին, կազմվում է ներքին գնահատման տեղեկանք՝ կառավարման խորհրդին ներկայացնելու նպատակով:

ՔՈԼԵՋԻ 2022-2027 Թ.Թ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	Միջոցառում	Գործողություններ	Ակնկալվող արդյունք	Արդյունքի վերահսկողություն, գնահատում	Ժամկետ	Ներդրում, ֆին. միջոց	Ռիսկեր
Նպատակ և զարգացման ուղղություն 1. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ							
1	Մասնագիտական վերապատրաստումներ, երիտասարդ կադրերով համալրում	-կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ՝ հրավիրելով մասնագետներ	- որակավորման բարձրացում՝ համապատասխանեցված տվյալ ժամանակաշրջանի շուկայի և վերանայված պետական կրթական չափորոշիչների պահանջներին		09.2022թ. - 09.2023թ.	Ներքին ռեսուրսներ, կապեր	Համապատասխան կազմակերպությունների մասնագետների հետ համագործակցություն
Նպատակ և զարգացման ուղղություն 2. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ							
1	Քոլեջի արդյունավետ կառավարման կառուցվածքի սահմանում, գործարկում	-վերանայել քոլեջի խնդիրները և սահմանել աշխատանքների արդյունավետ կազմակերպման մոդել -սահմանել կառավարչական ճկուն մեխանիզմներ՝ արագ	-հստակեցնել լիազորությունների և պատասխանատվության բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև և խստորեն հետևել դրանց իրականացմանը -անձնակազմի վերապատրաստման արդյունքում ժամանակակից		Մինչև 08.2023թ., շարունակական	Ներքին ռեսուրսներ, խորհրդատրվություն	Անձնակազմի վերաբերմունքը , ժամանակակից տեխնոլոգիաների նկատմամբ վերաբերմունքը , աշխատանքային ոգու բացակայությունը

		արձագանքման և կարգավորման համար -հետողական լինել աշխատանքային պլանների իրականացմանը՝ ըստ հաստատված ժամանակացույցերի	տեխնոլոգիաներին տիրապետող աշխատակիցներ				
--	--	--	--	--	--	--	--

Նպատակ և զարգացման ուղղություն 3.
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ

1	Տրակտորիստ-մեքենավարի կարճաժամկետ ուսուցում Նոր մասնագիտությունների ներդրում	-ըստ մասնագիտության՝ ստեղծել համապատասխան լսարաններ ու կաբինետներ, -կահավորել համապատասխան նյութերով և միջոցներով, -համապատասխան կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր	-արտաբյուջեի մուտքերի ավելացում, -աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում, -շուկայի պահանջարկի բավարարում, -շահառուների ավելացում		04.2023թ-ից և յուրաքանչյուր տարի Պահանջարկի դեպքում	Տնտեսված գումարներ և արտաբյուջեի միջոցներ Ուսանողներ ի թվի աճ	Ներքին շուկայում մասնագետների աշխատատեղերի պակաս
---	---	---	---	--	---	--	--

Նպատակ և զարգացման ուղղություն 4.
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶՄՅԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ՀԱՄԱԼՐՈՒՄ

1	Նյութատեխնիկական բազայի հաշվառում /գույքագրում/,	-ուսումնական և տեխնիկական գույքի հաշվառում՝ ըստ	-պիտանի գույքի հետագա շահագործում -ոչ պիտանի գույքի ակտավորում		12.2022թ. - 12.2024թ, շարունակական	Ներքին ռեսուրսներ /Ֆինանսական և մարդկային/	Ֆինանսների աղությունը, մասնագետների նվազումը
---	--	---	---	--	------------------------------------	--	--

	<p>շենքային պայմանների բարելավում</p>	<p>պիտանելիության -հաշվառված գույքի վերանորոգում կամ ակտավորում - երկրորդ մասնաշենքի մասնակի վերանորոգում, արհեստանոցի հիմնանորոգում</p>	<p>-խիստ անրաժեշտ գույքի ձեռք բերում -հարմարավետ և ժամանակակից լսարաններ, գործնական արդյունավետ պարապմունքներ</p>				
--	---------------------------------------	--	---	--	--	--	--

Նպատակ և զարգացման ուղղություն 5.
 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

<p>1 2</p>	<p>Նոր գործընկերների հետ պայմանագրերի կնքում ՄՄԾ-ի հետ հանդիպումների և քննարկումների հաճախակի անցկացում</p>	<p>-նոր գործընկերներին ուսումնական չափորոշիչներին ծանոթացում, -ուսանողների այցերն ծանոթացումները գործընկեր կազմակերպություններ</p>	<p>-լավագույն շրջանավարտների աշխատանքով ապահովումը -պրակտիկաների արդյունավետ կազմակերպումը և գործնական փորձի տրամադրումը ուսանողներին</p>		<p>09.2022թ-ից մինչև 01.08.2023թ. և շարունակական</p>		<p>Գործող կազմակերպությունների նվազումը /փակվելը/, ինչպես նաև համագործակցող շահառուների պակասը</p>
----------------	---	--	---	--	--	--	--